ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍԿԱՐ

(առարկա)

ԹԵՄԱ __«Ուսուցման արդյունավետ մեթոդների և հնարների օգտագործումը առարկաների /տարրական/ դասավանդման ընթացքում»_____

Կազմեց՝ _____Մարիամ Հրանդիկի Գալստյան_____

(անուն, ազգանուն, հայրանուն)

__Շվանիձորի միջնակարգ դպրոց__

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝_ԼՈՒՍԻՆԵ ԲԱԼԱՅԱՆ_____

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Աշակերտին սովորեցրու աշխատել, նրան ստիպիր ոչ միայն սիրել աշխատանքը, այլև այնքան նրան հարազատանալ, որպեսզի այն դառնա նրա երկրորդ բնավորությունը, սովորեցրու նրան այն բանին, որ նրա համար անհերևակայելի լինի այլ կերպ, քան սեփական ուժերով որևէ բան յուրացնելը, որ նա ինքնուրույնաբար մտածի, որոնի, իրեն դրսևորի, զարգացնի իր ննջող ուժերը, իրենից մշակի անսասան մարդու»:

Ադոլֆ Դիստերվեգ

Տարրական դպրոցը ուսումնահեն և օժանդակող դեր ունի աշակերտի կյանքում:Խաղը, անհոգ մանկությունը, մանկական հետաքրքրություններն ու արկածները թողնելով բակում՝ երեխան հայտնվում է մի նոր միջավայրում,որտեղ պետք է սովորի նայել,լսել,խոսել,սիրել,հարգել,օգնել. . . Այո՜,իհարկե երեխան այս բոլորը գիտի նախքան դպրոց գալը, սակայն դպրոցում այս ամենն սկսում է սովորել,որպես աշակերտ,որպես նոր և դեռ նոր՝ ինքն իր համար բացահայտվող անհատ:Եվ թե ինչպես երեխան կկարողանա հաղթահարել իր նոր աշխարհում առաջացած դժվարությունները,կընկալի նորությունները,կսովորի սիրել,կսիրի սովորել՝ պարզ կդառնա ուսուցչի հմտությունից և նրա կիրառած բազմաբովանդակ,պարզ և մատչելի,հնարամիտ և հետաքրքրաշարժ մեթոդների կիրառումից:Տարրական դպրոցում աշակերտը նման է նոր դուրս եկեղ շիվի և միայն ուսուցչի տքնաջան աշխատանքի շնորհիվ է,այն դառնում հաստաբուն և բերքատու ծառ: Ուսումնական բնագավառը ասես անմշակ այգի լինի,որտեղ աշակերտները նման են «չհերկված հողի »,այսինքն առկա է որակյալ կամ չբացահայտված հումք,սակայն առանց մշակելու հումքից բերք չենք կարողանա ստանալ, իսկ կրթական բնագավառում առկա կայուն,նորացվող առարկաները նման են չօգտագործված մշակման հումքի,որից օգտվելու,ճիշտ աշխատանք կազմակերպելու համար անհրաժեշտ է կիրառման արդյունավետ և ճիշտ հնարներ:Հաճախ դպրոցներում կրթական համակարգը նմանվում է անտառի,որը հարուստ է խիտ անտառածածկով,անտառի վերին շերտերը տատանվում են քամուց,սակայն բուն անտառում խաղաղ ու միապաղաղ կյանք է,այստեղ խաղաղ անտառը բուն կրթական գործընթացն է,որտեղ գործում է ավանդական մեթոդների

մի ամբողջություն,որը երբևէ դուրս չի գալիս իր ստանդարտներից,սակայն անտառի վերին շերտում անընդհատ նորացվող մեթոդաբանություն ու ռազմավարական մի ողջ շղթա է:Երբեմն-երբեմն քամին ուժգնանում է և ծառերից պոկված կոները ընկնում են անտառի բնակիչների գլխին,այսինքն երբեմն ուսուցիչները փորձում են կիրառել նորարական մեթոդներ և հնարներ:Առօրյա հոգսերի մեջ կռացած ուսուցիչը հաճախ է հայտնվում կարճաժամկետ մտածողության ծուղակում և կրթական մեթոդաբանության սանդղակով վեր բարձրանալու փոխարեն այրում է աստիճանավանդակները և շարունակում մնալ նույն փոսի՝ կրկնվող գործողության շղթայի մեջ:Սակայն հաճախ նորարական մեթոդների առկայությունը ուսուցիչներին դարձնում են անտառի նապաստակների նման,ովքեր գիտեն,որ անվտանգ ապրելու համար պետք է ոզնի դառնալ, սակայն չգիտեն,թե ինպես ոզնի դառնալ,այսինքն գիտեն հրաշալի մեթոդներ,բայց չգիտեն որտեղ և ինչպես կիրառել: Հնարները՝ մեթոդները,դառնում են արդյունավետ,երբ դրանք կիրառվում են ճիշտ,որի կիրառմանը ներգրավվում է աշակերտը որպես գործող անձ,այլ ոչ թե որպես դիտորդ:Աշակերտը որքան շաղախվում է ուսումնավարության ողջ գործընթացին՝ այսինքն,ոչ միայն լսում է ուսուցչի մատուցած դասը,այլ ինքն էլ դառնում է մատուցվող դասի մասնակիցը,ապա նյութը ընկալվում է էլ ավելի դյուրին, ավելի յուրացված և էլ ավելի ոգևորող:

«Աշխատանքի մեկ ժամն ավելի շատ բան է սովորեցնում, քան բացատրությունների մեկ օրը, քանզի եթե ես երեխային զբաղեցնում եմ արհեստանոցում՝ նրա ձեռքերն աշխատում են հօգուտ նրա խելքի, նա դառնում է փիլիսոփա՝ իրեն համարելով սոսկ արհեստավոր»:

Ժան-Ժակ Ռուսո

Սակայն այս ամենին զուգահեռ յուրաքանչյուր առարկա ունի իր մատուցման,ուսուցման մեթոդաբանությունը,իսկ մեթոդն էլ ավելի արդյունավետ է դառնում այն ժամանակ,երբ ուսուցիչը գիտակցաբար և ճիշտ է կիրառում այն:Հաճախ նոր,ժամանակակից և առաջին հայացքից արդյունավետ և ոգևորող թվացող մեթոդները իչիք են դարձնում ուսուցչի ակնկալիքները,քանի որ ուսուցիչը ուսումնասիրել էր միայն մեթոդը,վերջինիս թույլ և ուժեղ կողմերը,սակայն այն կիրառել էր,ոչ ճիշտ դասարանում կամ ոչ ճիշտ դասաժամին:Հետազոտական այս աշխատանքի ընթացքում կուսումնասիրվի տարրական

դպրոցում ուսուցման համար անհրաժեշտ մի շարք արդյունավետ մեթոդներ,որոնք բազմիցս կիրառվել են մայրենիի,մաթեմատիկայի,ես և շրջակա աշխարհը առարկայի դասաժամերին,տարբեր դասարաններում և աշակերտների շրջանում առաջացրել են ուսումնատենչություն և հետաքրքրություն մայրենի առարկայի նկատմամբ:Մարդկային գործի ամենապատասխանատու շղթայում ուսուցիչը իր առաքելությունը կատարված է համարում այն ժամանակ,երբ իր կիրառած բազմազան հնարների արդյունքում կարողանում է ձևավորել առողջ հասարակության արժանավոր անհատին՝ մարդուն:

Գլուխ1.Մայրենիի ուսուցման նորարական մեթոդներ

«Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ,

գործիք և ուսումնասիրության արդյունք:» Լ. Վիգոտսկի

Տարրական դպրոցի երեխան հետաքրքրասեր է,պրպտուն և կարողանում է զարմանալ ամեն նորի հանդիպելիս:Անկախ իր կամքից երեխան սիրում է սովորել ամեն նորը,իսկ այդ տարիքի երեխաների ուղեղ առաձգական են կարողանում են ամեն նորի ընկալման հետ ընդարձակվել և իրենց փոքրիկ գլխի մեջ տեղավորել ստացած նորույթը:ժամանակի հոսքի հետ եկած այն թույր արտահայտությունը,թե երեխան ծույլ է,անուշադիր,ցրված և այդ երեխային հնարավոր չէ բերել և մասնակից դարձնել դասապրոցեսին,այսօրվա մեթոդաբանության և հնարների աշխարհին խորթ են և անընդունելի: Հմուտ ուսուցչի ճիշտ և արդյունավետ կիրառած փոքրիկ հնարի, հետաքրքիր մեթոդի միջոցով հնարավոր է երեխային դարձնել ոչ թե ուղղակի լսող աշակերտ այլ, ուսուցիչ-աշակերտ՝ դասընթացի մասնակից,դասը վարող,վերլուծող աշակերտ: Հաճախ սովորողների պասիվ ներկայություն պահանջող,որևէ նպատակով կարևոր համարվող թեմայի ուսուցումը՝ որպես «դյուրամարս, բայց օգտակար սնունդ>> որակելով և դրա միջոցով սեփական իրականությունը պահպանելու կամ ճշգրտելու քայլ, անցյալ դարի 60-ականներից սկսեց աստիճանաբար փոխվել: Այս փոփոխության հիմքում աշակերտների «անխոս պահանջն էր»,որը ցուցադրվում էր յուրաքանչյուր դասաժամին ներկայանալով թերի և բացահայտ

անտարբեր վերաբերմունքով:Սովորողներ շրջանում կատարված հարյուրավոր հետազոտությունները ցույց էին տալիս,որ միայն կանոնների և անգիրների ուսուցումը հաճախ պատճառ էր դառնում արդեն իսկ տարրական դպրոցից նկատվող ուսման նկատմամբ սիրո բացակայությունը::Այս գործընթացը նմանվում էր կերակուրը առանց եփելու և համեմելու մատուցելուն,այսինքն մատուցվող գիտելիքը մնում էր ափսեի մեջ,իսկ աշակերտը այն միայն վերցնում էր դիտում,փորձում անգիր հիշել նրա կարևորագույն հատկանիշները,բայց, քանի որ այն չէր գրգռել աշակերտի քիմքը, հաջորդ վայրկյանին մոռանում էր թե առարկան,թե վերջինիս բովանդակությունը:Սովորողները զուտ կանոններով մատուցվող առարկան դժվարանում էին մտապահել և առհասարակ դրա վերաբերյալ որևէ դատողություն անել: Հետևաբար որակյալ կրթություն ստանալաու,հետաքրքրասեր և պահանջկոտ աշակերտ ունենալու համար անհրաժեշտ է աշակերտին լսողի և սովորողի դերից փոխադրել մասնակցի դերի :

Տարրական դպրոցում ուսուցման վերաբերյալ հետազոտությունների իրականացումը, ի թիվս այլ հանգամանքների նպաստեցին «ակտիվ մտածողության» տեսության առաջացմանը և դպրոցներում դրա գործնական կիրառմանը:Եվ ինչպես բոլոր նորն ու առաջավորը,այս նորամուծությունը նույնպես բախվեց կարծրատիպերի և ավանդական «ճշմարտությունների»:Սակայն ժամանակի ընթացքում նորարարության կիրառումը,վերջինիս արդյունավետությունը սահուն առաջ եկավ և ետ մղեց ավանդականին և չոր դասի մատուցմանը:Այս նոր մեթոդների կիրառությունը նպաստեց ոչ միայն աշակերտների մոտ գիտելիքի ձեռք բերման դյուրին գործընթացին և ընկալմանը,այլ նաև նպաստեց ուսուցիչների մատուցման որակին և արդյունավետությանը:Փոխվեց ուսուցիչների վերջնարդյունքների կաղապարը և ստանդարտ պատմող,անգիր հիշող աշակերտը փոխարինվեց վերլուծող,կարծիքներ առաջարկող,նոր գաղափարներ առաջ քաշող,քննադատող, ուսուցչի հետ հավասար նժարին կանգնած վիճող և վիճարկող անհատի:Արդյունքում տարրական դպրոցում ուսուցումը վերափոխվում է որպես ակտիվ մտածողական գործընթացի:Հետազոտական իրենց գործընթացում այս գաղափարին են հանգել նաև տարրական դպրոցի փորձառու ուսուցիչները,որոնց աշխատանքներից առանձնացրել եմ մի քանի հետաքրքիր հետազոտություն.

1/Ի՞նչ նյութի վրա էր գրվել այբուբենը:

2/Երեխան այբուբենը զուտ սովորելուց զատ ուսումնասիրում է նաև այն նյութը,որը որպես պահոց ծառայել է գրերին::

Նմանատիպ հարցերը կարելի է շարունակել, ու մտագրոհի, քննարկումների միջոցով սովորողները կբացահայտեն, իրենց համար մի նոր ու հետաքրքիր աշխարհ և կընկալեն դպրոց ոչ թե զուտ չոր և սառը գիտելիքամատուցման կայան,այլ վայր,որտեղ իրենցից յուրաքանչյուրը իրեն կարող է զգալ որպես հետազոտող,պրպտող ,սովորող և ուսուցանող,իր իմացածը մյուսների հետ քննարկող նորկայացնող անհատ:Աշակերտները,որոնք դեռ նոր են սովորում կրթության գագաթնակետին հասնելու համար ամենանվազը,սկսում են են ոչ միայն հասկանալ,այլև ներկայացնել վերջինիս կարևորությունը,դերը մարդկության կյանքում,մեծ ոգևորությամբ սկսեցին կատարել հետազոտական, մտովի արշավ և կատարում են շատ ճիշտ և իրենց գիտելիքների համեմատ բավականին ակտիվ և հմուտ վերլուծություն:Աշակերտները կարծես մի պահ իրենց զգացում են ուսուցիչ,վերլուծաբան,ինչն էլ ավելի ոգևորում է վերջիններիս և նրանց մոտ բարձրաձնում է դպրոցը որպես ինքնուրույնության և անհատականության կերտման վայր:

*Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն:**Միխայիլ Կալինին***

Այսինքն իր գործում պատասխանատու վարքագիծ դրսևորող ուսուցիչը կարողանում է կերտել, մարդ, մասնագետ,վերլուծաբան, քաղաքացի:Կարևոր է,որ դասավանդողները ուսումնական ռազմավարությունները կիրառեն ժամանակի արդյունավետ կառավարմամբ/որոշեն,թե որքան ժամանակ են տրամադրելու այս կամ այն ռազմավարությանը/,քանի որ յուրաքանչյուր դասարան կամ սովորող կարող են անհատական մոտեցում պահանջել:Այս ռազմավարական գործունեեության ընթացքում կարողանում են դրսևորել համբերատարություն:Հարցադրումները հնչեցնելուց հետո սովորողներին տան դադարի ժամանակ,հանդուրժողաբար լսեն նրան՝ սեփական կարծիքվ ուղղորդելու: Հաճախ պատահում է,երբ մի քանի տասնյակ սովորողների ցուցադրվում է մի պատկեր,իսկ հարցի պատասխանն ակնհայտ գրված է լինում հենց

պատկերի վրա,սակայն տևական ժամանակ նրանցից որևէ մեկը չի նկատում այդ բաղադրիչը,միայն տրամադրված ժամանակի վերջին պահին նրանցից մեկը վերջապես նկատում է այն: Այսպիսի պահերը մեծ բավականություն են պատճառում սովորողներին:Եվ շատ կարևոր է որ,այստեղ վերահսկող,խիստ ուսուցչի դերը փոխարինվում է համբերատար ուսուցչի կերպարով,ում համար կարևորագույնը աշակերտների ինքնուրույնությունն է և ակնհայտ հանգամանքներում ինքնուրույն հարցի պատասխանները գտնելը:

Գլուխ 2.Տարրական դասարաններում ուսուցման մի քանի ռազմավարական հնարները և դրանց կիրառությունը

«Մեկ երեխա, մեկ ուսուցիչ, մեկ գիրք, մեկ գրիչ կարող են փոխել աշխարհը»:

Մալալա Յուսաֆզայ

Նորարական մեթոդները ուսումնասիրելիս աչքի զարնվեց <u>կերպարային քարտեր</u> մանկավարժական ռազմավարական մեթոդը,որի կիրառումը նպաստում է հեքիաթներում,պատմվածքներում կարևոր իրադարձությունները ներկայացնող կերպարներին «ներսից» տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար:Քարտը ներկայացնում է իրադարձության /հեքիաթի/պատմվածքի/ կերպարների մտադրությունները, հուզական վիճակները, տեսանկյունները, գաղափարները, կարծիքները և այլն:Կերպարային քարտը խթանում է ակտիվ մտածողության տարատեսակի հարցադրումների քննարկմանը: /Պարադիգմա»կ/հ 2020թ./:

Այս ռաազմավարական մեթոդը կիրառել եմ 3-րդ դասարանում «Մխիթար Հերացին և տակառագործը» դասը ամփոփելիս:Աշակերտների հետ միասին կազմեցինք կերպարային քարտերի մի քանի օրինակ,որը բաժանվեց վիճակահանության միջոցով,այնուհետև տրվեց ժամանակ,որպեսզի կարողանան իրենց դրսևորել որպես համապատասխան տրված կերպարը,որից հետո ներկայացվեց իրավիճակը և աշակերտների հետ կազմակերպեցինք կերպարների,այնուհետև նրանց միջոցով պատմվածքի,այդ պատմվածքի իրադրությունից բխող գործողությունների քննարկում և վերլուծություն:Կարևոր և հետաքրքրական էր այն հանգամանքը,որ աշակերտները կարողացան ազատ քննարկել և տալ ճիշտ և կշռադատված

վերլուծություններ վերոնշյալ թեմայի շուրջ:Շատ ավելի կարևոր և նշանակալից է այստեղ ուսուցչի դերը և դիրքորոշումը. որպեսզի աշակերտները կարողանան անկաշկանդ կերպով ընկղմվել քննարկման մեջ,ուսուցիչի վերահսկող,խիստ կերպարը պետք է փոխարինվի խրախուսող և օժանդակող կերպարով:

«Մխիթար Հերացին և տակառագործը»դասից կերպարային քարտի օրինակ՝	
1.Մխիթար Հերացի Դու ժողովրդի սիրելի բժիշկ Մխիթար Հերացին ես: Սիրու՞մ եք մարդկանց և ինչու՞	*2.Դու տակառագործն ես.* Դու հետաքրքրասեր տակառագործ ես,ինչու՞ ուշ ժամին այցելեցիր բժշկին,Ծանո՞թ ես բժշկի աշխատանքին:

Այս մեթոդը կիրառել եմ նաև դաս միջոցառման ժամանակ:Միջոցառումը կրում էր «Հյուրերը հեքիաթից» խորագիրը:Դաս միջոցառմանը «ներկա էին» Քաջ Նազարը, Ձախորդ Փանոսը,Կարմիր գլխարկը և այլոք:Նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում էր իրեն,իր կատարած գործերը և ամենակարևորն այն էր,որ երեխան ներկայացնում էր հերոսի բացթողումները,նորովի գաղափարները::Դասը հետաքրքիր էր թե կերպարային առումով և թե իր ողջ բովանդակությամբ:Կերպարները արտաքին տեսքով հնարավորինս նմանեցվել էին իրական հերոսներին,ինչը էլ ավելի էր ոգևորել աշակերտներին և արդյունավետ աշխուժություն մտցրել դասապրոցեսում:

Բավականին հետաքրքիր և արդյունավետ մեթոդ է խմբային ***քննարկման դերային քարտերը***:

Այս մեթոդը հրաշալի արդյունք է ապահովում մեծաթիվ դասարաններում,իսկ փոքրաթիվ աշակերտ ունեցող դպրոցներում կիրառելի է վիկտորինաների կամ միջդպրոցական միջոցառումների ժամանակ:Այստեղ կարելի է երկու/երեք/ մրցակից խմբերին տալ ընդհանուր թեմա կամ առանձին թեմաներ,որտեղ խմբի յուրաքանչյուր անդամ ունի իր դերը. Խմբի անդամներից յուրաքանչյուրը <u>ռիսկերի դիմող ստեղծարար</u> անդամ է,ով՝

- խնդրի մասին մտածում է քննադատորեն և հանգամանալից
- առաջադրանքի լուծման համար ստեղծարար մոտեցումներ է առաջարկում
- կարողանում է գաղափարների մասին պատմել ոգևորությամբ,չի կաշկանդվում

Համակարգող՝

- օժանդակում է,որպեսզի խմբի յուրաքանչյուր անդամ կարողանա արտահայտել իր մտքերը,իսկ մյուսները լսեն վերջինիս
- քննարկման վերջում խմբի անդամներին ներկայացնում է ընդհանուր նախագիծ,որը պետք է ներառի քննարկված բոլոր գաղափարները և լինի հնարավորինս գոհացուցիչ

Հետազոտող՝

- առանձնացնում է այն կետերը,որոնց շուրջ խմբի արտահայտած գաղափարները լրացուցիչ մանրամասների ուբացատրության կարիք ունեն:
- Միակ անձն է,ով իրավունք ունի ուսուցչից տեղեկություն խնդրել
- Կատարում է հետազոտություններ և ներկայացնում դրանք խմբին

Ժամանակը պահող՝

- ապահովում է խմբի կողմից ժամանակի արդյունավետ օգտագործումը
- խմբին տեղյակ է պահում ժամանակի կիսման,այնուհետև սպառման մասին:

Քարտուղար՝

- գրի է առնում խմբի արտահայտած գաղափարներն ու առաջարկած լուծումները՝ առանց դրանց վերաբերյալ սեփական կարծիքը արտահայտելու
- կազմում է ընթեռնելի և մանրամասն տեքստ ,որը իր մեջ ներառում է ողջ քննարկում,այնուհետև տրամադրում ներկայացնողին

Ներկայացնող՝

- Խմբի կատարած աշխատանքը ներկայացնում է դասարանին և ուսուցչին
- Պատրաստ է պատասխանել հարցերին:

Այս աշխատանքում յուրաքանչյուրը գիտի իր դերն ու պարտականությունը, աշխատանքը արդյունավետ է լինում,երբ աշխատում են համախմբված և համագործակցային,կարողանում են հարգել միմյանց մտքերը և արագ կողմնորոշվում հնչեցված կարծիքներից ճիշտը որոշելու հարցում:

Աշակերտների ինքնուրույն աշխատանքի ուղղորդելու լավագույն մեթոդներից է **«Սովորողները՝ որպես ուսուցիչ»** մեթոդը:Այս մեթոդը հաճախակի կիրառում եմ տարբեր դասարաններում:Այն արդյունավետ է գրեթե բոլոր տարիքային խմբերում:Սովորողներին պարբերաբար առաջարկում եմ կազմակերպել «փոքր դաս»:Այսինքն աշակերտները ոչ թե որևէ թեմա են պատմում դասընկերներին,այլև ստիպված են լինում նախ հանգամանորեն ուսումնասիրել տրված նյութը,այնուհետև ներկայացնել դասարանին:Այս ռազմավարությունը զարգացնում է վերլուծելու,վերլուծումը ներկայացնելու և բացատրելու հմտությունները: Օրինակ՝ 3-րդ դասարանում մայրենիի դասաժամին,երբ ամփոփվում <<Լինում է,չի լինում՝ մի հեքիաթ է լինում>> բաժինը ,աշակերտներից մեկ,երկու հոգու հանձնարարում եմ մեկական թեմա,որը ընդգրկված չի լինու դասագրքում, որի շուրջ առաջարկում եմ կազմել 10-15 րոպե տևող փոքրիկ դաս:Աշակերտներին ուղղորդում եմ,թե ինչպես և որտեղից կարելի է ներկայացնել

տվյալ թեման:Այնուհետև կազմակերպում ենք «փոքր դասի» անցկացում:Այս մեթոդը և ոգևորություն է առաջացնում աշակերտների մոտ, և մրցակցություն:

Մեծաքանակ աշակերտ ունեցող դասարաններում,որպեսզի ոչ ոք դուրս չմնա այս հետաքրքրաշարժ գործընթացից և բոլորը տեղավորվեն ժամանկի մեջ,կարելի է ի սկզբանե կազմել խմբեր և աշխատանքը հանձնարարել խմբերին:Այս մեթոդը նման է «Խմբային քննարկման դերային քարտեր» մեթոդին,սակայն ի տարբերություն վերջինի «Սովորողները՝ որպես ուսուցիչներ» մեթոդի ժամանակ ուսուցիչը չի պատասխանում այն հարցերին,որնոց ծանոթ չեն աշակերտները,այլ վերջիններս ինքնուրույն են գտնում հարցի պատասխանը և այն ներկայացնում դասարանին:Եվ այս մեթոդի կիրառումը նպաստում է,որպեսզի աշակերտները շարունակեն ոգևորությամբ և պատասխանատվությամբ աշխատել նաև տանը:

Ես և շրջակա աշխարհը առարկան 4-րդ դասարանում ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության մարզերը: Դասաժամին կիրառվում է քարտեզ:Քարտեզի միջոցով աշակերտը շրջագայում է պատմության հանրապետության մարզերով և էլ ավելի լավ է պատկերցնում Հայաստանը:Բավականին հաջողված ռազմավարություն է ***«քարտեզային քննարկումը»,***որը կարելի է կիրառել 4-րդ դասարանում՝ ըստ սովորողների իմացության և պահանջների: Աշխատանքը սկսելու համար նախ և առաջ անհրաժեշտ է.

- ✓ ընտրել որևէ մարզ,որը ուսումնասիրում եք տվյալ դասաժամին,
- ✓ այնուհետև ինքնուրույն,կամ ուսուցչի օժանդակությամբ պետք է ստանալ տվյալ մարզի նկարագրությունը աշխարհագրական քարտեզի վրա:,
- ✓ տեղանշումներ կատարել քարտեզի վրա,ինչը կարելի է կատարել էլ ավելի հետաքրքիր և ժամանակակից միջոցի օգնությամբ /օրինակ՝ Google Earth-ի/:

Դասապրոցեսը ճշգրիտ և հետաքրքիր դարձնելու համարանհրաժեշտ է,որ ուսուցիչը նախապես աշակերտներին տրամադրի .

- ➢ պատմական աղբյուրներ,որը կնպաստի ճիշտ կետից նախապատրաստվելուն
- ➢ արխիվային լուսանկարներ ճշգրիտ պատկեր ստանալու նպատակով:

Այս ռազմավարությունը կարելի է կիրառել.

- երբ քննարկում-վերլուծություն է իրականացվում տարածքային փոփոխությունների շուրջ

- երբ կատարվում է քարտեզի միջոցով ողևորության վերլուծություն/օրինակ՝ Սյունիքի մարզի կենտրոնը/,

Այս ռազմավարությունը իր բազմազան ճյուղերով կիրառել եմ Ես և շրջակա աշխարհը դասաժամին,որոնք շատ մեծ աշխուժություն և ոգևորություն են առաջացրել աշակերտների շրջանում:Ռազմավարությունը մեծ ոգևորությամբ ընդունվեց թե թղթային տարբերակով կատարելիս,թե էլեկտրոնային:Այս մեթոդը նպաստում է նրան,որ արդեն միջին դպրոցում աշակերտը ավելի հեշտ և սիրով է մոտիվացվում պատմության և աշխարհագրության դասերին::

Գլուխ 3. Հարցում աշակերտների և ուսուցիչների շրջանում

Ժամանակակից դասավանդման մեթոդները բազմազան են և հետաքրքրական: Սակայն մեթոդները հետաքրքիր և ոգևորող են թվում,երբ կարդում ես,մտածում,պատկերացնում դրա գործարկման տեսքը,ընթացքը և արդյունքները:Հաճախ դասաժամին կիրառելիս ակնհայտ աշխուժությունից կամ աշակերտենրի արձագանքից թվում է,որ հասել ես նախատեսած վերջնարդյունններին:Ուսուցիչը ամեն վայրկյան աշխատում է ստեղծել ամենամատչելի,ամենահետաքրքրական և արդյունավետ մեթոդը դասաժամը ճիշտ և որակյալ կազմակերպելու համար:Ուսուցիչը ճանաչում է իր յուրաքանչյուր աշակերտին և գիտի նրա հետաքրքրության մտահորիզոնը և միշտ փորձում է աշխատել այնպես,որ կարողանա թափանցել այդ հորիզոնի շրջանակաները և գրավել աշակերտին՝ հարստացնելով նրա գիտելիքների պաշարը:Սակայն նույնիսկ երկու հոգանոց դասարաններում աշակերտները գտնվում են տարբեր պատրաստվածության մակարդակներում և ունենում են տարբեր հետաքրքրություններ և ուսուցիչը աշխատում է իր ուժերի գերլաված պայմաններում,որպեսզի իր մատուցած դասը հասու լինի յուրքանչյուրին: Վերոնշյալ ռազմավարական հնարները բազմիցս կիրառել եմ տարբեր դասարաններում և տարբեր դասերի ժամանակ,ըստ իս եղել են արդյունավետ և հետաքրքրական,սակայն համոզմանս մեջ էլ ավելի ամրանալու համար

որոշեցի հարցում իրականցնել թե աշակերտների շրջանակում և թե ուսուցիչների:Աշակերտները պետք է պատասխանեին,թե նշված մեթոդներից, որն են

նախընտրում,որն է իրենց համար էլ ավելի արդյունավետ և ինչու/տես՝ հավելված 2/,իսկ ուուցիչները պետք է նշեին,թե նշված մեթոդները կիրառու՞մ են արդյոք իրենց դասաժամերին և ի՞նչ արդյունավետության են հասել և ունե՞ն նմանատիպ մեթդներ որոնք կիրառում են իրենց դասաժամերին:Իրականացված աշխատանքի արդյունքում պարզվեց,որ կիրառված հնարները բավականին արդյունավետ են և հետաքրքրական:Աշակերտների մեծամասնությունը նախընտրում է պատմության դասաժամերին կիրառել նորարարական հնարներ,որոնք դասերին համուհոտ են տալիս:Աշակերտները սիրում են կերպարային քարտերը, նշելով,որ այն իրենց մոտ ինքնավստահություն է առաջացնում և իենք իսկապես ընկղմվում են կերպարի ողջ էության մեջ և փորձում են մտածել հենց նրանց պես,կամ փորձում են մտովի տեղափոխվել տվյալ ժամակաշրջան դատողությունները ավելի ճիշտ կատարելու համար:Սովորելու ձգտում ունեցող աշակերտները նշում են,որ այս աշխատանքը էլ ավելի պարտավորեցնող է և իրենք հաճախ փնտրում և ընթերցում են լրացուցիչ նյութեր ավելի պատրաստված և ներկայանալի լինելու համար:

Քննարկման դերային քարտերի մասին նշում են,որ այն նպաստում է ,որպեսզի աշխատանքը կատարեն համախմբված,միասին քննարկումներ իրականացնեն,երբեմն նույնիսկ փոքրիկ բանավեճ կազմակերպեն և արդյունքում գտնեն ճիշտ պատասխանը:Նաև նշում են,որ գնահատում են յուրաքանչյուրի դերը և կազմակերպվածությունը:

Հետաքրքրական է,բայց «Սովորողները՝ որպես ուսուցիչ» մեթոդը շատ ավելի գրավում է ուսումնառության մեջ ոչ այնքան փայլուն արդյունքներ գրանցած աշակերտներին,վերջիններս նշում են,որ այս մեթոդի կիրառման արդյունքում իրենց ավելի կարևոր և բարձրն են զգում:Իրենց իսկապես զգում են,որպես ուսուցիչ,և հոգու խորքում հպարտանում են,երբ նույնիսկ ուսուցիչը աշակերտի տեսքով և ուշադրությամբ լսում են իրենց:

«Քարտեզային քննարկում» աշխատանքը աշակերտների շրջանում ընդունվել է միանշանակ:Վերջիններս նշում են,որ աշխատանքը կատարելիս իրենց զգում են մերօրյա «Կոլոմբոս»,որը կարողանում է ճանապարհորդել ոչ միայն տարածության,այլև ժամանակի

և իրադարձությունների մեջ: Ուսուցիչների շրջանում իրականացված հարցում-քննարկման ժամանակ պարզվեց,որ «կերպարային քարտեր» և «սովորողը՝ որպես ուսուցիչ» մեթոդները հաճախակի են կիրառվումոչ միայն տարրական դպրոցում,այլև ավագ դպրոցում,հատկապես գրականության և պատմության դասերին,որոնք դարձյալ ըստ ուսուցչի վկայության բավականին արդյունավետ են և մեծ ոգևորությամբ են ընդունվում աշակերտների կողմից:Իսկ «քննարկման դերային քարտերը» և « քարտեզային քննարկում» ռազմավարությունները բազմիցս կիրառվում են մաթեմատիկայի դասերին և էլ ավելի բովանդակալի են դարձնում դասաժամերը: Աչքի զարնող էր նաև այն հանգամանքը,որ այս մեթոդները կիրառելի համարեցին նաև փորձառու,տարեց ուսուցիչները՝ նշելով որ ավանդական ուսուցում հասկացությունն էլ իր ժամանակին է եղել նորարական և որպեսզի կիրառվող մեթոդները չդառնան միապաղաղ և ավանդական անհրաժեշտ է,որ ուսուցիչը ամեն օր աշխատի նույնիսկ նորարական ռազմավարական հնարների շուրջ,յուրքանչյուր անգամ կիրառելիս մի նոր դետալ ավելացնի կամ մի նոր երանգ հաղորդի կիրառվելիք մեթոդին:Կատարված հարցման արդյունքում եկա հետևյալ մտքին,որ ուսուցումը կարելի է այսպես բնութագրել ինչքան շատ գիտես,և ամեն օր մեկ նոր ես գումարում իմացածիդ,ապա այնքան շատ կարող ես:

Հետազոտական աշխատանքս ավարտին հասցնելու նպատակով գործընկերներով պայմանավորվեցինք և կազմակերպեցինք փոխադարձ դասալսումներ:Դասալսում անցկացրեցի 11-րդ դասարանում հայ գրականության դասաժամին:Ուսումնասիրվող դասի թեման էր Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակը:Ուսուցիչը դասի ժամին կիառեց կերպարայի քարտեր մեթոդը:Կիրառված ռազմավարությունը դասին հաղորդեց բովանդակային աշխուժություն:Նշանակալի էր այն հանգամանքը,որը աշակերտները վիպակի կերպարները ներկայացրեցին յուրովի,նույնիսկ Սառայի կերպարը հանդես եկավ իր անձի շուրջ մեղադրական եզրակացությամբ,որը մեկնաբանեց և պատասխանեց ուսուցչի կողմից հնչեցրած հարցերին:

Նմանօրինակ դասալսումներ անցկացրեցի մայրենիի,մաթեմատիկայի և ես և շրջակա աշխարհը առարկայի դասաժամերին,վերջիններս էլ փոխադարձ դասալսումներով հանդես եկան մայրենիի, մաթեմատիկայի իմ դասժամերին,որից հետո կազմակերպեցինք վերլուծական

քննարկում, արդյունքում նկատեցինք կատարվող ժամանակակից մեթոդների,դասավանդման նորարարության արդյունավետությունը և աշակերտների կողմից առաջ քաշվող նորի և էլ ավելի մեծ արդյունքների պահանջը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեթոդների իմացությունը բնութագրում է,թե ինչպես պետք է դասը կազմակերպել,այն հանգամանքը,երբ գիտես ինչպես կիրառես մեթոդները, բնութագրում է փորձառու ուսուցչին,իսկ այն բանը,որը բնութագրում է ուսուցչին դասի ընթացքում արդեն իսկ կիրառած մեթոդների արդյունավետության հանգամանքը,խոսում է հանճարեղ ուսուցչի մասին:Ուսուցչի սրբազան պարտականությունն է սովորեցնել,սովորել սովորեցնել և սովորեցնելուն զուգահեռ անընդհատ սովորել,քանզի մարդկության երջանկությունը կառուցվում է գիտելիքների վրա:Եվ եթե ժամանակակից դպրոցը կառուցված է աշակերտահեն գաղափարախոսության վրա,ապա թե ժամանակակից աշխարհում,և թե մարդկության ծնունդից ի վեր աշխարհը եղել է գիտելիքահեն.խելացիները կառավարել են հիմարներին:Աշակերտահեն դպրոցում հնարավոր է հասնել արդյունավետության այն ժամանակ,երբ ուսուցիչը դուրս կգա կաղապարված ավանդական դասավանդման մեթոդներից և ամեն օր կկիրառի նորը այնպես,որ աշակերտը ուսուցչին կդիտարկի որպես սպասված հրաշագործի,որը դասը վեր է ածում գիտելիքներով հարստացրած նկարի,և ամեն օր այդ նկարը ստանում է նոր գույներ և տեսք: Բազմազան և նորարարական մեթոդներից ուսուցիչը պետք է կարողանա ընտրել այն մեկը,որը հաճո կլինի աշակերտների «գիտելիքային,փորձարարական ճաշակին»:

Եզրակացություն

Ուսումնասիրելով «Ուսուցման արդյունավետ մեթոդների և հնարների օգտագործումը առարկաների /տարրական/ դասավանդման ընթացքում» թեման, եկա այն եզրահանգմանը, որ մատուցման ձևերը ընտրելիս ուսուցիչը պետք է անընդհատ հետազոտի այն աշակերտներին,որոնց հետ աշխատում է թե՛ ամեն օր, թե՛ երբեմն-երբեմն: Պետք է հաճախակի կազմակերպի քննարկումներ կամ անցկացնի հարցումներ աշակերտների շրջանում հասկանալու համար իր կիրառած մեթոդների արդյունավետությունը:Ինչո՞ւ չէ,ուսուցիչը հաճախակի պետք է իր կիրառած մեթոդները քննարկի և՛ իր համադպրոցական գործընկերների հետ, և՛ միջդպրոցական գործընկերների: Ժամանակակից դարաշրջանում մեթոդների նորարարության շուրջ քննարկումներ կարելի է կազմակերպել արտասահմանյան գործընկերների հետ, վերցնելով նրանցից լավագույնը, կամ փոխանցելով քո իսկ ստեղծած արդյունավետը: Կարելի է նույնիսկ խորհրդատվություն ստանալ հայտնի մանկավարժական մեթոդաբաններից ,և ի վերջո կարելի է աշխատել ամեն մի նոր աշակերտի« ուսումնական պահանջի» շուրջ և քեզ համար ստեղծել քո «ինչպե՞ս դասավանդել» հարցի պատասխանը:Եվ ինչպես ասում է Պ. Լապլասը.

« Այն, ինչ մենք գիտենք՝ սահմանափակ է, իսկ այն, ինչ մենք չգիտենք, անվերջանա լի է.» և մենք մեր չիմացության որոնման արդյունքում պետք է հասնենք նրան,որ աշակերտը հավատա, որ անհասկանալին կարելի է հասկանալ, այլապես նա չէր սկսի մտորել անհասկանալիի մասին:

Հավելված 1

Դասի պլան

Դասարան – III դասարան
Դասի տիպ-
Գիտելիքների,կարողությունների
,ունակությունների ամրապնդման
դաս
Դասի թեմա – Հայկական և հռոմեական թվագրության համակարգեր (Դաս 14, էջ 23, Ս. Մկրտչյան և այլք, Մաթեմատիկա 3)

Նպատակները՝
կրթական.

1. Իմանա թվագրության հայկական, հռոմեական և հնդկական համակարգերի մասին:
2. Ճանաչի երկրաչափական մարմինները, իմանա դրանց անվանումները:
3. Իմանա «. . . ով ավելի» պայմանով և «. . . ը դամենը քանի՞» պահանջով խնդիրների լուծման եղանակը:
4. Կարողանա գրել տրված թվագրություններին համապատասխան հնդկական թվերը՝ օգտվելով աղյուսակից:
5. Կարողանա համապատասխանեցնել երկրաչափական մարմին իր անվանը:
6. Կարողանա լուծել պարզ խնդիրներ:

սոցիալ–անձնային. կարևորի աշխատանքի ճիշտ կազմակերպման անհրաժեշտությունը գործնական աշխատանքներ կատարելիս

Վերջնարդյունք
Իմանա երկրաչափական պատկերների անվանումները
Իմանա թվագրության հայկական, հնդկական և հնդկական համակարգերի նշանները

Ուսուցման մեթոդներ – գործնական, մասնակի-որոնողական, զննական-

ցուցադրական
Կահավորում – աղյուսակներ, համակարգիչ, տեսացրիչ,

Դասի ընթացքը

Խթանում
Ուսուցիչ - Կարդացե՞ք թիվը, ի՞նչ է ցուցց տալիս 458 թվի մեջ թվանշաններից յուրաքանչյուրը :

Աշակերտ- 8-ը ցույց է տալիս, որ այս թվի միավորների կարգում կա 8 միավոր, 5-ը ցույց է տալիս, որ տասնավորների կարգում կա 5 տասնավոր և 4-ը ցույց է տալիս, որ այս թվի հարյուրավորների կարգում կա 4 հարյուրավոր:

Իմաստավորում

Ուսուցիչ - Այսօր մենք օգտագործում ենք թվանշաններ, որոնք առաջացել են դեռևս1500 տարի առաջ, դրանք հնդկական թվագրության համակարգի թվանշաններն են:

Սակայն բացի այս թվագրության համակարգից գոյություն ունեն այլ թվագրությանհամակարգեր

Թվագրության հայկական համակարգը. այստեղ թվանշանների փոխարենհանդես են գալիս հայերեն այբուբենի մեծատառերը:
Ինչպես տեսնում եք այստեղ Ա-ին համարժեք է 1-ը, Բ-ին՝ 2-ը, Գ-ին՝ 3-ը, Դ-ին՝ 4-ը և այսպես շարունակ, Թ-ն համապատասխանում է 9-ը: Ավելի մեծ թվերը ներկայացնում ենք այլ թվերի միջոցով՝ Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Ճ Այստեղ Ժ-ին համապատասխանում է 1 տասնյակը, Ի-ին՝ 2 տասնյակը, Լ-ին 3տասնյակը, այսպես շարունակ, Ճ-ին համապատասխանում է 100-ը:
Այս համակարգի օգնությամբ մենք կարողանում ենք համարակալել գրքերի առանձին գլուխներ, կամ թեստային աշխատանքների ժամանակ ձեզ տրվող հարցերիպատասխանները:

Հետաքրքիր է, որ այս համակարգում ևս կարող ենք գումարում կատարել, սակայն այդ գումարումը կտարբերվի մեր իմացած սովորական գումարումից, նախ և առաջ նրանով, որ այստեղ գումարման նծան չենք օգտագործի:
Օրինակ Բ-ին Գ գումարելու համար գումարման նշան նրանց միջև չենք դնի, պարզապես նայում ենք, որ Բ-ին համարժեք է 2-ը, Գ-ին 3-ը, մենք 2-ին գումարում ենք 3, ստանում 5, ապա նայում ենք, թե 5-ին որ տառն է համապատասխանում: 5-ին համապատասխանում է Ե-ն, ուևեմն գրում ենք, որ ԲԳ=Ե: Նույն ձևով հնդկական թվագրության ցանկացած թիվ կարող ենք ներկայացնել հայկական թվագրությամբ:

Այժմ անցնենք թվագրության հաջորդ համակարգին՝ Թվագրության հռոմեական համակարգ:

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 թվանշաններին ինչ թվանշաններ են փոխարինում հռոմեական համակարգում

Ավելի մեծ թվերը, ինչպիսիք են 10, 20, 30, 40, 50, 60, 70, 80, 90, 100, սրանցարդեն փոխարինում են հետևյալ թվանշանները:
Հռոմեական թվագրության համակարգի նշանները ևս տարածվածեն, նրանցով օրինակ կարող են համարակալված լինել մերդպրոցի դասարանները, կամ առավել հաճախ կտեսնենք, որ այսնշաններով համարակալվում են դարերը:

Այժմ հռոմեական թվագրությամբ գրենք 21-րդ դարը:
Ինչպես հայկական թվագրության համակարգում, այնպես էլ այս համակարգում մենք կարող ենք թվերը իրար գումարել ,սակայն այս դեպքում ևս գումարումը կատարվում է որոշակի յուրահատկություններով: Օրինակ 5-ին գումարած 2-ի փոխարեն,պարզապես 5-ի կողքը գրում ենք 2

62-ը հավասար է 6 գումարած 2, մենք աղյուսակից տեսնում ենք, թեինչ նշանով է արտահայտվում 60-ը, ապա նայում ենք, թե ինչ նշանով է արտահայտվում 2-ը: Պարզապես այդ նշանները գրում ենք իրար կողքի: Թվերը գումարելիս գումարման նշան չենքդնում, գրում ենք նախավելի մեծ թիվը , ապափոքրը:

Այստեղ արդեն հռոմեական թվագրության ավելի մեծ նշաններ ունեն

Կշռադատում

Այսօր իմացանք, որ բացի հնդկական թվային հմակարգից, որը մենք հիմա կիրառում ենք, աշխարհում հայտնի են նաև թվագրության այլ համակարգեր, մասնավորապես այսօր ծանոթացանք դրանցից երկուսին՝ հայկական թվագրության համակարգ, հռոմեական վագրության համակարգ

Գործնական աշխատանք

1. Օգտվելով աղյուսակից՝ գրել հռոմեական և հայկական թվագրություններին համապատասխան հնդկական թվերը:

2. Համեմատել՝ հռոմեական թվագրությամբ գրված թվանշանները՝ դնել >, < կամ = նշանները

3. Երկրաչափական մարմիններիպատկերները միացնել իրենցանվանումներին:

4. Լուծել խնդիրը

Դասարանում սովորում է 10 տղա և 4-ովավելի աղջիկ: Ընդամենը քանի աշակերտ է սովորում դասարանում:

Ամփոփում 4. Լուծել խնդիրը

- Հավանեցի՞ք դասը:
- Ի՞նչ սովորեցինք այսօր:
- Նոր սովորածը որտե՞ղ և ե՞րբ կարող ենք կիրառել:

Ի՞նչ անհասկանալի հարցեր ունեք:Տնային աշխատանք. Առ. 84, էջ 23:

Օգտագործված գրականության ցանկ

1.«Գիրք ուսուցման»,«Պարադիգմա» կրթական հիմնադրամ,2020թ.

2. .<<Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա>> Ռ. Հանայան, 2014թ

3. www.churchofjesuschrist.org/study/

4.https://avedisianschool.am/am/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC/

5. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

Բովանդակություն

Ներածություն ----------էջ 1

Գլուխ1. Մայրենիի ուսուցման նորարական մեթոդներ----------էջ3

Գլուխ 2.Տարրական դասարաններում ուսուցման մի քանի ռազմավարական հնարները և դրանց կիրառությունը ----------էջ 6

Գլուխ 3. Հարցում աշակերտների և ուսուցիչների շրջանում----------էջ 11

Ամփոփում----------էջ 14

Եզրակացություն----------էջ 15

Հավելված 1----------էջ 16

Օգտագործված գրականության ցանկ----------էջ 19